Մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի <<Գոմքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ- ի Հայոց լեզու և Գրականություն (13 դասաժամ), Մաթեմատիկա (32 դասաժամ), Ռուսաց լեզու (23 դասաժամ), Ֆիզիկա (9 դասաժամ), Աշխարհագրություն (7 դասաժամ), Կենսաբանություն (6 դասաժամ), Օտար լեզու (14 դասաժամ) , ԹԳՀԳ (10 դասաժամ) , Ինֆորմատիկա (1 դասաժամ), Պատմություն (8 դասաժամ), Շախմատ (3 դասաժամ) Կերպարվեստ (6 դասաժամ), Երաժշտություն (7 դասաժամ), Ֆիզկուլտուրա (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՆՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում,
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին >>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն(Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները

վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. Օգոստոսի 20-ից մինչև Սեպտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 –ից մինչև 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Մրցույթը տեղի կունենա Գոմքի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ , գ. Գոմք 3փ, շ 16/1, 2025թ. Սեպտեմբերի 5-ին՝ ժամը 15:00-ին:
Տեղեկությունների համար զանգահարել (098)767697 հեռախոսահամարով: